

### Գ Ի Յ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

## Մ Ի Հ Բ Ը Հ Ա Յ Ո Յ Մ Է Ջ

(Շարտանակութիւնն .)

3.

Ակնբերել է Մհերի էլ դիւացումը :

Արդի ժողովրդական վէպի մէջ Մհերի բնաւորութեան երկուութիւնը վաղուց մատնանշել է Արեղեանը : Սրա կարծիքով Մհերը նոյն խիստ աւելի չար է, քան բարի... բնաւորութեամբ դիւական. առասպելի հնազոյն ձեւը դիւական Մհերի առասպելն է, որի մէջ ժամանակի ընթացքում մտել են բարի դիւցազնի արարքներ ու դժեր. սրա հետեւանքով էլ սկզբնապէս չար Մհերը դիւցազնացել է եւ դարձել ժողովրդին սիրելի Դաւթի որդին<sup>1</sup> : Այլապէս ասած՝ Արեղեանի կարծիքով ինչպէս Արտաւազդի առասպելի, այնպէս եւ Մհերի զրոյցի մէջ կատարուել է ոչ թէ դիւացում, այլ ապադիւացում :

Կրօնների ու դիւցարանութեան պատմութեան մէջ ապադիւացումը նոյնքան հնարաւոր երևոյթ է, որքան եւ դիւացումը, սակայն այս a priori հնարաւորութիւնը դեռ չէ ապացուցում ներկայ թանձրացեալ դէպքում, թէ Մհերի բնաւորութիւնն ու ժամանակներում է դիւական դարձել : Ինչպէս որ Արտաւազդի առասպելի ուսումնասիրութեան ժամանակ Արեղեանի միակողմանութիւնն առաջ էր դալիս համազամանքից, որ բանասէրն անտեսում էր Շիրգարի զրոյցներն, այնպէս էլ այս դէպքում նրա սխալները բոլորում են այն պարագայից, որ նա մտահան է անում Միհրի առասպելն ամբողջովին եւ չի կռահում Միհր, ու Ամիրան անունների ստուգարանական կապակցութիւնը : Այս անունների ստուգարանութիւնը, Միհրի առասպելը Կովկասեան զրոյցների հետ համեմատելը եւ «Մհերի դռան» ու Dar-i-Mihr-ի առաջընթացութիւնը միանգամից կը լուսաւորէր տեսարանը, եւ կ'երեւար, որ անհնարին է ժխտել Միհրի առասպելի ու Կովկասեան դիւցազների զրոյցների ընդհանուր ու էական նմանութիւնը : Մասնաւորապէս այն բնույթից, երբ յայտնի

դառնար, թէ մեր Մհերը ոչ այլ ոք է, բայց եթէ հուր-արեւ Միհրը, կը լուծուէր նաեւ այն հարցը, թէ որն է սկզբնական առասպելը — դիւամարտ Մհերինը, թէ՞ դիւական Մհերինը, եւ թէ արդեօք կատարուել է դիւացում, թէ՞ ապադիւացում : Պարսից առասպելի մէջ Միթրան սկզբից մինչեւ վերջ լոյսի ու բարու Աստուած է. խաւարային ու դիւական դժեր նրա մէջ չկան բնաւ : Եթէ Մհերը Միհրն է, եւ սրա զրոյցը մեր վէպի մէջ մտել է իրանական կրօնի դժեղ ազդեցութեամբ, ապա երբ վէպն այս դիւցազնին օժտում է դիւական դժերով, պէտք է ընդունել, որ այս դիւական դժերը յետոյ են մտել, քանի որ յայտնի է, թէ սրանք չկային հաւատալիքի ազդեցում : Սկզբնապէս դեւ Միհրը (= դեւ Մհեր) նոյնքան անընդունելի մի դադարար է, որքան խաւարակուռ արեւը :

Այնուհետեւ. ժողովրդական վէպի մէջ ուշադրաւ է այն, որ Մեծ Մհերը միանգամայն անխառն բարի դիւցազն է, չունի դիւական ոչ մի դիժ. նա զազանամարտ է, ինչպէս հրէից Սամսոնը, յունաց Հերակլէսն<sup>1</sup> ու վրաց Ամիրանը : Իսկ մեզ յայտնի է ոչ միայն Կանայեանից, այլ եւ Արեղեանից, որ Առիւծաձեւ Մհերի ու Պատիկ Մհերի զրոյցներն իրապէս միեւնոյն զրոյցի տարբեր դրուիւններն են լոկ եւ ուրեմն վէպի մէջ երկու Մհերի փոխարէն սկզբում եղել է մէկ Մհեր, որի երկձեղքուելով առաջ են եկել Մեծ Մհերն ու Մհերիկը<sup>2</sup> : Արդ, եթէ Մհերի առասպելի հնազոյն վարիանսը դեւ Մհերի առասպելն է, ինչպէս պէտք է բացատրել այն իրողութիւնը, որ պապն — Առիւծաձեւ Մհերն անխառն բարի դիւցազն է եւ քոռը — Պատիկ Մհերն է միայն բնաւորութեան երկուութեամբ օժտուածը : Մենք կարծում ենք, որ եթէ սկզբնական միակ Մհերն անխառն բարի դիւցազն չլինէր, նրա երկձեղքուելուց յետոյ նրա կտորներից մէկը չէր կարող անխառն բարի դիւցազն ներկայանալ : Մնում է ընդունել, որ ինչպէս որ Արտաւազդի ու Շիրգարի զրոյցների փոփոխակիների երեւան գալու ժամանակաբանական յաջորդականութիւնը զուգահեռ է ընթացել առասպելի դիւացման գարգացման, այնպէս էլ երբ վէպը նախ պա-

<sup>1</sup> «Հայ ժող. առասպելները», 359—360 :

<sup>2</sup> Կանայեանց, «Ջոջանց տան պատմականը», 45 ու Արեղեան, «Հայ ժող. վէպը», 170 :

պին — Առիւծաձեւ Մհերին անխառն բարի բնաւորութիւն է տուել եւ թողին — Պատիկ Մհերին է օտակել բնաւորութեան երկուութեամբ, թէ բարի ու թէ չար գծերով, — ապա ժողովրդական ստեղծագործութիւնը սերունդների յաջորդականութեան այսպիսի կարգով հաւատարիմ է մնացել պատմական դարդացմանը՝ համընթաց շարժուելով դիւացման դարդացման հետ:

Մհերի քարայրումն է Չարիսի քաղաքը, ճակատագրի աղը, Բախտանիւր: «Հոն աշխարհի ոսկին կուտուած է»: Մհերի «քեարէն ճրագի բուխ կըլնը»: Վերջապէս Մհերն, այն բանտարկեալը, որ կայուած էր մնալու մինչեւ աշխարհի վերջը, դուրս է թողնուած գրասանքի (վիշապաքաղու թեան դարերում ի՛նչպէս կարեկից վերաբերմունք դէպի ահռելի կալանաւորը...)

Եւ դուրս է թողնուած հենց այն գիշերը, որ ժողովրդական հաւատալիքի ու երեւա-կայութեան կախարհիչ թարգման բա-նաստեղծը երգել է այնքան գունագեղ:

«Համբաձման գիշեր, էն գիւթիչ գիշեր,  
Կայ հրաշալի մի գիւթիչ վայրկեան...  
Բացուած են ոսկի երկնքի դռներ,  
Ներքեւ պապանձուած, լուսմ ամեն բան...  
Այն վեհ վայրկեանին չքնաղ գիշերի՝  
Երկնքի անհուն, հեռու խորքերից  
...Աստղերը թռած իրար են գալիս,  
Գալիս կարօտով մի հեղ համբուրում  
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամա-  
րում...»<sup>1</sup>

Այս միջավայրում ու պայմաններում է, որ «Մհեր էն քարից կ'ըլլայ, աշխարհ կազբէ»: Այս գիւթական շրջանակի մէջ դրած դիւցազնը շատ հեռու է գիւթական հե-րոսի խաւարապատ վիճակից: Քարից ել-նող ու ամէն տարի աշխարհն աչքող ձիաւոր Մհերն աւելի շուտ պահապան ողին է, որ գիւթիչ ու չքնաղ գիշերը շրջում է սրար-շաւ՝ երկրին հսկելու: Սա՛ ո՛ւր, Աժգա-հակն՝ ո՛ւր: Այս Մհերն աւելի շուտ յիշեց-նում է գերման աւանդութեան հերոսին, որ մենացած է քարայրում եւ ահեղ ժամին ղէնք ու գրահով դուրս է դալու չարիքի ու չարերի դէմ կուռելու:

Մհերի գրոյցի ամբողջական քննութիւնը երեւան է հանում առասպելի լուսավայել խորքն ու դիւցազնի հրեղէն դիմագծերը,

որոնք ներդաշնակ են իրար: Սակայն այս չէ խանգարում, որ նկատենք այն հետքերը, որ գրոյցի ու հերոսի վրայ դրել է դիւացումը: Դիւացման այս հետքերն անհամե-րաշի են դիւցազնական տոհմավէպի ոգուն ու հերոսի հին տարերքին եւ, իբրեւ այս-պիսիք, մասնում են այն իրողութիւնը, որ Մհերի մէջ գիւթական գծերը յետոյ են աւե-լացրած: Սակայն եւ այնպէս փաստ է, որ սրանք կան գրոյցի մէջ եւ սրանք են, որ եր-կուութիւն են տուել դիւցազնի բնաւորու-թեանը:

Մհերը կուտւած է հօր հետ, նախան-ձում է հօրը, հայրն անիծում է նրան... Եւ Մհերը փակուած է քարայրի մէջ մինչեւ աշխարհի վերջը... Նա պիտի ելնէ եւ կո-տորում անելով աշխարհն աւերէ՞:

Այսքանից արդէն պարզ երեւում է Մհերի չար բնաւորութիւնը: Այն փաստը, որ նա կուտւած է դիւամարտ հօր անիծում է ամպրոպային դիւցազնի կողմից, բնորո-շում է նրան իբրեւ դիւական հերոսի: Սա-կայն կարելի է բերել մի շատ համոզիչ ա-յապոյց էլ, որից կ'երեւայ, թէ դիւացման հետեւանքով Մհերը ոչ միայն չար բնոյթ է ստանում, այլ եւ ներկայանում է իսկա-կան աստուածամարտ: Զրոյցի փոփոխակ-ներից մէկի մէջ գտնում ենք հետեւեալ մե-ծարժէք հատուածը:

«Աստուած եթ ձիաւոր խրեշտակ ճամ-խեց խէտ Մհերին կուվիլու. կէս օրվնէ շուտ էրիկուն կուվան. Մհեր թուրն կէժակին կթախէր, խրեշտակներուն չէր բռնի, ամայ կթախէր, խրեշտակներն Մհերին շատ շարձարեցին: Մհեր աչք դէս էրկինք վերայ, Աստուած է խնդրեց, որ ուր ողորմութիւն դուռ բանայ վէր Մհերին: Աչք դարձուց վեր երկրին, տէսաւ, որ Ակոփու քեարի տակ խասեր ի. էն տեղ քեար տոան պէս բացուաւ, Մհերն էն մտաւ, մնաց էն տեղ:  
մէջ մտաւ, մնաց էն տեղ ի...»<sup>2</sup>:

Այստեղ էլ դիւացումը հասնում է իւր գագաթնակէտին, եւ հուր արեւ Մհեր-Միհրը, որ ծնուել էր վէժից եւ փակուած էր մնում քարաժայռի մէջ՝ դարերի վեր-ջում իբրեւ գինավառ ու հեծեալ դիւամարտ եւ իբրեւ ազատարար Մեսիա հանդէս դա-ւում համար, դառնում է խաւարի մար-լու համար, դառնում է խաւարի մար-

<sup>1</sup> Արեղեան, «Հայ ժող. առասպելները», 359—360:  
<sup>2</sup> Կանայեանց, «Սամայ ծաեր վէպի երեք փոփո-»

1 Թու մանեան, «Բանաստեղծութիւններ», 127:



մնացում, մի աստուածամարտ չարաղել, որ փակուած է Ակուփու քարի մէջ իբրեւ «ղիւրասպի ի լեանն Դարաւանդ կամ զմեր Արտաւազ ի ծայրս Այրարատայ ի Մասիբոհն...»<sup>1</sup>:

4.

Մենք տեսանք, որ Միթրայի հայ փոփոխակներն — Արտաւազէն ու Մհերն — անկասկածելի դիւացման ենթարկուելով վերջ ի վերջոյ դարձել են չար Արտաւազը ու անիծեալ Մհեր: Արդ, հարց է ծագում, թէ

<sup>1</sup> Գր. Մազիսարոսի «Թ ղ թ երբ», ԼԶ. «Առ Հնձացին Գրեգոր տեւեթոս», 90—91: Գարով վրացական դիւցանդին, պէտք է տեսլ, որ Ամիրանն էլ է դիւացման պրոցեսսին ենթարկուել: Սրա բնաւորութեանն երկուութիւնն աւելի վաղ է նշել Ա. Խախանովը 1895 թուականին, քան մեր ուսումնասիրողներն Արտաւազինը կամ Մհերինը: «Ի դեմս Ամիրանի այս զոյցի, — ասում է Խախանովը, — մեր ունենք երկու շերտ: որում, որոնցից մէկի համաձայն Ամիրանը բարու աստուածն է, իսկ ըստ միւսի՝ չարաղել է: Ամիրանը Քրիստոս է դեւերին, կուում է երկրքի դէմ նրա համար, որ աշխարհիս երեփն ամեն ինչ արդար ու կատարեալ չէ, ձգտում է կաթով չաղախուած ու ոչ թէ արինով հունցած հաց տալու մարդկանց... Միւս կողմից՝ Ամիրանի անձի հետ զուգորդուած է կռիւն ընդդէմ Աստու, Յիսուսի Քրիստոսի: Ամիրանը ցանկանում է բնաջնջել մարդկանց... Նա ըմբոստանում է բուն իսկ Աստու դէմ եւ նրա հետ մրցել է սկսում, որի հետեւանքով շղթայուած է երկաթէ ցցից եւ մի անհասկանալի սար շուռ է տուած նրա վրայ... Վրաց հեթանոսական կրօնի մէջ չարի Աստուածը պակասում է. այս թերին կարող է ցնել Ամիրանը» (Xaxaxov, 42): Վրացի բանասէրի այս վերջին կարծիքն, ի հարկէ, լոկ թիրիմացութեան արդիւնք է, որովհետեւ վրաց հեթանոսական կրօնի մէջ Ամիրան-Միհրը միայն բարի աստուած բնոյթ կարող էր ունենալ, եւ նրա նկարագիրը փոխուել է ազդեցութեամբ քրիստոնէական կրօնի, որն առասպելի մէջ իբրեւ գործող անձեր մտցրել է իւր Աստուծուն ու նոյն իսկ Յիսուսին: Մի երկու խօսք էլ վրաց Արտաւազի մասին: Մեր հարեւան ժողովրդի դիցաբանական զրոյցների մէջ մոռացուել է առասպելն Արտաւազի. որի պաշտամունքը միջազգային ծաւալ ունէր Առաջաւոր Աստուծոյ: Սակայն վրաց ժողովրդական բանահիւսութիւնը պահել է յուշիկներ, որոնք ցոյց են տալիս, թէ այստեղ էլ է եղել Արտաւազի հաւատալիքն ու առասպելը: Մինչեւ այժմ չեն գտնուած հետքեր վրաց բարի Արտաւազի մասին: «Արտաւազ-ի» կամ «արտազի» նշանակում է «կախարչների զիւաւոր», «հմայների պետ» (նախապէս զարբին, քուրմ): Աւելի որոշակի են դիւացած Արտաւազի յիշատակները: Վրաստանի որոշ գաւառներում, ինչպէս ցոյց է տեսել Վուկոլ Բերիձէի գաւառական բառգիրքը, «արտազի» (= Արտաւազ-Արտաւազ-Արտաւազ) բառը դարձել է հասարակ գոյական եւ նշանակում է «ստանայ, պոչաւոր»: Նոյն Բերիձէի տեսլով էր իմպրեսիոնն ու ռաճեցիները յանդիմանում են իրենց անդադար երեխաներին, ասում են. «Օ՛ լին Արտաւազո», այսինքն «Վ՛յ դու Արտաւազ», ճիշտ այնպէս, ինչպէս հայերը նման դէպքերում ասում են. «Վ՛յ դու Չար-Յուլիանոս» (Բանբեր 24Ի, Ա-Բ, 95):

արդեօք մեր դրականութեան մէջ չկայ մի որեւէ, թէկուզ փոքրիկ, թոռուցիկ, բայց անմիջական ապացոյց, որ վկայէր, թէ ոչ միայն Արտաւազի ու Մհերի, այլ եւ հենց իւր, լուսաւոր Միհրի հաւատալիքը փոխուել էր, վերածուել չար Միհրի դաղափարի, որի հետեւանքով Միհր անունը դարձել էր մի ծանր նախատական անուն կամ մակդիր, ինչպիսիք են հայոց մէջ կայէնը, Յուլան, Յուլիանոսը, Լենկ-թեմուրը կամ, աւելի յարմար օրինակ, վրաց մէջ Արտաւազը:

Բարեբախտաբար կայ, եւ այս ապացոյցը տալիս է թովմայ Արծրունին:

Սա իւր «Պատմութեան» Գ. դպրութեան, ի՛նչ զլխում («Վասն սքանչելեացն, որ ցուցաւ յնստանն Ռչտունեաց յամս զօրավարութեան Գաղկայ») նկարագրում է մի դէպք, որ կատարուել է Գաղիկ Ապուստան Արծրունու սպանութեան (895—879) ու Սարգիս-Աշոտ Արծրունու մահուն (904—907) արանքում ընկած ժամանակամիջոցում<sup>1</sup>: Պատմած դէպքը մի սովորական խաչազոյութիւն է: Մի նեստորական լուսամուտից ծածուկ մտնում է Ոստանի եկեղեցին, զողանում «բառածրագիծ փայտին հիւնեալ» ու «արծաթեղինան արտաբուստ պատեալ» խաչը եւ փախչում. ճանապարհին այսահարում է, զլրբում լեռան զառիվայրից եւ ջախջախելով մեռնում: Մի սովորական պատմութիւն, որ ինքն ըստ ինքեան առանձին հետաքրքրականութիւն չունի:

Բայց ահա տեսէք, թէ ինչ բառերով է բնորոշում պատմագիրը խաչազոյին:

«Նոր ոմն Նարուզարդան կամ Զամբի, յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեք թշուառեան վատաշուէր, ՎԱՏՄԻՐՀ, զասպանութեան չարիս ախտացեալ<sup>2</sup>»:

Այս «վատմիրհ» բառն, իբրեւ նորապիւտ բառ, առաջին անգամ մատնանշել է Հր. Աճառեանը եւ բացատրել է իբրեւ կողքին դրուած «վատաշուէր» բառին հոմանիւն<sup>3</sup>: Այս բացատրութիւնը ճիշտ է)

<sup>1</sup> Թուականներն ստուգումը տեսէք մեր «Կարճեցեալ Ըպուհըն» յօդուածում («Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», Ա-Բ, 250—251):  
<sup>2</sup> Արծրունի, Գ, ԻԷ, 244, հմտ. նաեւ նոյնի 2-րդ ծանօթութիւնը, որ նշում է, թէ մի այլ ձեռագիր ունի «վատմիրհ» ընթերցուածք:  
<sup>3</sup> Հրաչեայ Աճառեան, «Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մէջ», Վենետիկ, 1913, էջ 208:



դալ իբրեւ դժոխական չաստուած մի: Բայց զասոնք բաւական չեմք համարիր մեր Նեոն անունը ստուգարաներու<sup>1</sup>:

Ալիշանի հետաքրքրական տողերից մեր աչքում ուշագրաւ է այն, որ նա այնքան էլ չի վստահում Նեոն = Ներոն զուգադրութեանը («յոմանց կարծեցաւ Ներոն կայսր») եւ ընդհանրապէս իւր ձեռքի տակ եղած տուեալները բաւական չէ համարում «մեր Նեոն անունն ստուգարանելու»:

Ալիշանից մի տասնամեակ յետոյ նոյն բառի ստուգարանութեանը ձեռք է զարկում մի այնպիսի հեղինակաւորութիւն, որպիսին է մեծահռչակ հայերէնագէտ Հ. Հիւրշմանը: Սա հարցին մօտենում է զուտ ու խիստ լեզուարանական տեսակէտից<sup>2</sup>: Հիւրշմանի ասելով Նեոն = Ներոն զուգադրութեան կոհանումը դեռ բաւական չէ. անհրաժեշտ է Ներոն անունն Նեոն բառ զառնալը հանդամանօրէն հիմնաւորել հայերէնի լեզուարանական օրէնքներով: Պէտք է պատճառարանել, թէ 1. ինչպէս է Ներոն բառի Բ հնչիւնը դարձել ու ու 2. ինչպէս է Νερωn անունն վերջին վանկի օ հնչիւնն ընկել հայերէնում, որով Ներոնը դարձել է Նեոն:

Ըստ Հիւրշմանի՝ սրանցից առաջին երեւոյթի բացատրութիւնը հեշտ է. հայերէնում, յատկապէս փոխառեալ բառերի մէջ, ր փափուկ հնչիւնը յաճախ է փոխւում ու-ի, մանաւանդ երբ այս հնչիւնն ընկնում է ն-ից առաջ (հմմտ. πόρον = պոռնիկ, βαστέριον = բաստեռն, χιστέρινα = կիստեռն, μαρτύριον = մատուռն):

Աւելի մանուածապատ է օ հնչիւնի անկման բացատրութիւնը:

Հիւրշմանն ասում է, որ եթէ Ներոն բառը հայերէնին անցած լինէր նախահայկական, այսինքն մինչ-պարթեւական շրջանում, ապա լիովին հասկանալի կը լինէր այս օ-ի անկումը, որովհետեւ յիշեալ շրջանում բառի վերջին վանկի ձայնաւորի անկումն ընդհանուր օրէնք է հայերէնում (հմմտ. \*dukter = դուտք, skesura = սկեսուր եւայլն): Բայց Ներոն բառը հայերէնին անցել է պարթեւական ու քրիստոնէական շրջաններում, երբ փոխառած բառերի վերջին վանկի ձայնաւորն այլ եւս չէր ընկ-

նում, ուստի եւ, օրինակ, յունարէն λαπαθ(ος), պահլաւերէն patkar, sāmān ու միջին պարսկերէն safsēr բառերը հայերէնում դառնում էին ոչ թէ «լապտր», «պատկր», «սահմն» ու «սուար», այլ լապտեր, պատկեր, սահման ու սուներ: Այս բառերի պէս Νερωn բառն էլ պարթեւական ու քրիստոնէական շրջանում փոխ անուելով հայերէնի մէջ կարող էր հնչուել կա'մ լրիւ Ներոն եւ կա'մ վերջին ոն հնչիւնները կորցնելով զառնար սոսկ Ներ:

Ինչպէ՞ս է հազա Ներոնը հայերէնում դարձել Նեոն:

Հիւրշմանն այսպիսի բացատրութիւն է տալիս. պարթեւական կամ վաղ-քրիստոնէական շրջանում թէեւ ընդհանուր օրէնք էր, որ հայերէնին անցած բառերի վերջին վանկի ձայնաւորը պահպանում էր, սակայն պատահում էին բառեր, որոնք կորցնում էին այս ձայնաւորը. այսպիսիք էին կայսր, դօր (= դաւր) ու բիւր (= բեր) բառերը, որոնք ծագել են յունարէն χαΐσαρ, միջին պարսկերէն zāvar ու պահլաւերէն bevar բառերից՝ վերջին վանկում ր հնչիւնից առաջ կորցնելով ա հնչիւնը:

Պարթեւական ու վաղ քրիստոնէական շրջանի այս մասնակի օրէնքի ներդործութեամբ է ահա, որ Հիւրշմանը բացատրում է Նեոն բառի՝ Ներոն անունից ծագելը, որի ժամանակ ն հնչիւնից առաջ ընկել է օ հնչիւնը:

Այս մասնակի օրէնքի ներդործութեամբ ձեւաւորուած բառերի թիւը Հիւրշմանը դնում է չորս՝ Նեոն (= Ներոն) էլ հետը հաշուելով: Իսկ յունարէնից առած ու վերջին վանկի ձայնաւորի անկումով գոյացած ուրիշ բառ չէ մասնանշում մեծանուն հայերէնագէտը, բացի կայսր բառից: Նրա «Հայերէնի քերականութիւնից» դիտենք, որ յունարէնից փոխառած չորս բառ — կիւնիկն, մատուռն, պաղատն եւ վիզն — առաջ են եկել χυρήγιον, μαρτύριον, παλάτιον ու βικτιον բառերից<sup>1</sup>: Սակայն Նեոն բառն ստուգարանելիս Հիւրշմանն այս բառերը չէ յիշատակում: Ինչո՞ւ: Այս պէտք է բացատրել երկու պատճառով. առաջին՝ որ այս բառերում կորչում է ոչ թէ մենակ ա կամ օ հնչիւնն, այլ ւօ ձայնախումբը եւ

<sup>1</sup> Ալիշան «Հին Հասարակ», 230-233:  
<sup>2</sup> «Indogermanische Forschungen», XIX. Band, Strassburg, 1906, էջ 457-480. — H. Hübschmann «Armeniaea», § 3. — Arm. Neřn «Antichrist», էջ 472-475:

<sup>1</sup> Hübschmann «Arm. Gr.», 357, 363, 370, 383 ու 331:



թուփեամբ, երբ Պոմպէոսը Տիգրան Բ. Մեծին յաղթելով՝ սրան Հռոմի դաշնակից դարձրեց: Սակայն ճիշդ մի դար տեւող երկարատեւ կռիւներից յետոյ յաղթանակեց Պարսկաստանը: Այս յաղթութեան հետեանքով Պարսկաստանի պարթեւ թագաւոր Վաղարշի կրտսեր եղբայր Տիրիթ-Տըրդաւր 66 թ. Ք. Յ. Հայոց թագն ստացաւ Ներոն կայսրից Հռոմում եւ հայ Արշակունի հարստութեան հիմնադիր հանդիսացաւ:

Բայց Հռոմի այս իրական պարտութիւնն սքողուեց արտաքին ձեւերով ու շքով եւ յաղթանակի դունաւորումն ստացաւ: Ժամանակակից Տակիտոսը պատմում է, թէ Պարսկաստանի պարթեւ թագաւոր ամբարտաւան Վաղարշը պահանջում էր կորրուլոնից, որ իւր եղբայր Տրդատի վրայ ծառայութեան ստուեր չձգուի, սուրբ մէջքից չարձակուի, չարզելուի զրկախառնումը հոռոմայեցի կոնսուլների հետ, սրանց գուանը նա չը սպասէ եւ Հռոմում հիւպատոսական պատիւներով ընդունուի (Տարեգիրք, ԺԵ, լա): Իսկ մերձ-ժամանակեայ Դիոն Կատիոսը Տակիտոսի համաձայն պատմում է, թէ ինչպէս Տրդատ-Արտաշէսը Հրանդէտ-Նոանդ տեղում երկրպագելով Ներոնի կիսանդրուն, որ հաստատուած էր բարձր բեմի վրայ, զոհարեթութիւնից յետոյ թագը գլխից հանելով դրաւ կայսեր պատկերի ստների առաջ: Եւ ապա, — շարունակում է պատմագիրը, — ծաղկահասակ Տրդատը ձի հեծած, 3000 հեծելազորի, իւր ոսկեսաղաւարտ ամուսնու ուղեկցութեամբ, մոզերի ու բազմաթիւ հոռոմայեցուց հետ ցամաքով Հռոմ ուղեւորուեց արքայական շքով: Քաղաքները նրան ընդունում էին հանդէսներով ու ցնծութեան աղաղակներով: Բոլոր կարիքները հոգացւում էին ձրի. օրական ծախքը «երկերիւր բիւր դահեկան» (ըստ Գարագաշեանի՝ 2 միլիոն դրամ, իսկ Ferdinand Justiի «Geschichte des Alten Persiens», Berlin 1879, էջ 169 ունի 200.000 դենար): Զանապարհորդութիւնը տեւեց 9 ամիս: Իտալիայում Տրդատ-Արտաշէսը Ներոնի ընդ առաջ ուղարկուած կառքով նախ հասաւ Նէպոլիս. այստեղ «հակառակ հրամանի, որ վաղակաւորը — թուրն արձակէ, շատ ու բաւական համարելով սուրբ պատեանը մխել, թէպէտ եւ ծունկը գետնին դնելով եւ ձեռքերը կրծքին՝ կայսրին «Տէր»

կոչեց եւ երկրպագեց»: Ապա գիշերով Հռոմ մտաւ: «Քաղաքն ամբողջ զարդարուած էր ճրագներով ու պսակներով. ամենուրեք խուռն բազմութիւն. մանաւանդ հրապարակը լի էր ամբոխով... Ժողովուրդը կարգ կարգ, սպիտակ հանդերձներով ու դափնիներով. զօրքը զինավառ ու զարդարուած... Տանիքներն անգամ ծածկուած էին բազմութեամբ... Հետեւեալ օրն արեւածաղին ինքը Ներոնը յաղթութեան պատմուձանով հրապարակ մտաւ ծերակոյտի եւ թիկնապահների հետ եւ թեմ բարձրանալով կայսերական աթոռը նստաւ: Ապա Տրդատը իւրայիններով շրջապատուած՝ սրանց հետ հասաւ բեմի առաջ եւ ցնծութեան աղաղակները տակ երկրպագեց կայսեր: Արշակունին շփոթուած դունատուեց, բայց զսպելով իւր գոռոզութիւնը՝ խոնարհուեց՝ այսպէս դիմելով Ներոնին. «Տէր, ես զաւակն եմ Արշակի, եղբայրը Վաղարշի ու Բակուրի եւ քո ծառան: Եկայ քո մօտ, որ իմ աստուածն ես, երկրպագելու քեզ իբրեւ Միհր աստու»: Ապա Տրդատը կայսրի հրամանով բեմը բարձրացաւ, նստաւ Ներոնի ոտների տակ, եւ սա թագը դրաւ նրա գլխին: Թատերական խաղեր էլ տեղի ունեցան ծերակոյտի հրամանով: Թատրոնը... գլխովին ոսկեղօծ էր, եւ բոլոր կարասին ոսկեպատ, ուստի եւ այս օրը կոչուեց ոսկեղէն օր: Հանդիսականներին արեւի տապից պատսպարող վարպոյրները ծիրանուց էին: Մէջ տեղը նստած էր Ներոնը ոսկեհուս հանդերձով... Հանդիսաւոր խաղերի ու խնձոյքների ժամանակ «կառավար» ու «քնարահար» կայսրը զիւր չեկաւ ամբարտաւան ու գոռոզ արեւելեան թագակրին, որը սակայն իւր կարծեցեալ հաճոյականութեամբ, ողորական ու հնազանդութեան խօսքերով արժանացաւ մեծամեծ պարգեւների, որոնց զինը հասնում էր «հինգ հազար բիւր դահեկանի» (ըստ Justiի, էջ 170 «50 միլիոն դենար»): Բացի այս՝ Տրդատը «հրաման ստացաւ Արտաշատը շինելու», որի համար էլ գործաւորներ տրուեցին կայսրից» (Դիոն, ԿԲ, 19—23, ԿԳ, 1—7: Հմմտ. Ա. Մ. Գարագաշեան, «Քննական պատմութիւն Հայոց», Բ, Ժա, § 8—10, էջ 231—240):

Այս անօրինակ ուղեւորութիւնն ու ընդունելութիւնը Հռոմին նստել է մի աստիճանով գումար: Հաշուելով «հնագոյն արծաթ գե-

նարը  $\frac{1}{144}$  կգ. և և = 82 Ֆեննիդի (Fr. Lub-  
 kers, Reallexikon des klass. Altertums,  
 էջ 1325)՝ օրական ծախսը կ'անի 200.000 ×  
 82 Ֆեննիդ = 16,400.000 Ֆեննիդ կամ ու-  
 ղիդ 164.000 մարկ, որ շատ մօտ է Յուստու-  
 օրական «163.000 մարկից աւելուն»: Ինն  
 ամսուանը (30-ական օրով = 270 օր) կ'անի  
 164.000 մարկ × 270 = 44,280.000 մարկ:  
 Ըստ այսմ էլ Տրդատ-Արտաշէսի՝ Ներո-  
 նից ստացած նուէրները արժէքը կլինի  
 50,000.000 × 82 սֆ. = 4.100,000.000  
 սֆ. = 41,000.000 մարկ: Եւ եթէ հաշուե-  
 լու լինենք թատերական խաղերի, «ոսկե-  
 դէն օրուայ» եւ լուկուլլոսեան ճաշերի ծախ-  
 սերը կայսեր նուէրները կէսի չափ, ապա  
 բոլորը միասին կարող են հասնել 50 միլիոն  
 ուլբուց աւելի մի դոմարի, եթէ մինչ-  
 պատերազմեան ուրբիւն միջին դնով հա-  
 շուենք 2 մարկ:

Արդ, այս բոլորից յետոյ կարո՞ղ էր  
 դիւրաշլաց ու նուէրատենչ արեւելի հայ  
 արքան իւր աւագանով ատել Ներոնին,  
 բայց եւ Հայաստան վերադառնալուց յետոյ  
 Արտաշատը վերանորոգելով այս քաղաքն  
 «Ներոնիայ», անուանել «ի պատիւ կայսեր «Ներոնիայ»,  
 ինչպէս յոյն-հռոմայեցի պատմագիրներէր  
 քաղելով գրում է Չամէնանը («Պատմութիւն  
 Հայոց», Ա, ԻԵ, 327): Այս կլինէր անբնա-  
 կան ու անբանական: Հայ աւագանին իւր  
 արքայով հանդերձ կարող էր շլանալ, հիա-  
 նալ եւ առնուազը գոհ լինել Ներոնից: Իսկ  
 հայ հասարակ ժողովուրդը գուցէ զիտէր  
 կայսր, բայց ոչ կայսեր «Ներոն» անունը:  
 Եւ այս ենթադրում եմ եւ պնդում՝ նկատի  
 ունենալով մեր անցեալը: ԺԹ. դարի վեր-  
 ջերին վերջնութեւ պատերազմի ժամանա-  
 կուայ հայերէն ու թուրքերէն ժողովրդա-  
 կան երգերը յիշում էին երկու կողմի Լո-  
 սիո-Մելիթով, Տէր-Ղուկասով, անունները  
 Մուխթար-Փաշա զօրավարների անուններն աս-  
 միայն. այլ եւ լսում էր «Օսմանըն աս-  
 կարի», «Մոսկովըն թոխլարի» եւայլն:  
 Երբեմն միայն յիշվում էր «Փաթիլչազ», իսկ  
 «ցար», մանաւանդ թագաւորների յատուկ  
 անուններ անձանօթ էին հայ ու թուրք ժո-  
 ղովուրդներին: Նոյն այս երեւոյթը նկա-  
 տում է մեր ժողովրդական «Չոջանց տան  
 — Սասմայ ծոբը» վէպում էլ, որ տեղ  
 յիշում են Մարայ մելիք, Բաղդասու Սա-  
 լիֆայ» եւայլն:

Սրանից հետեւում է, թէ այն հայ-

կացքն, ըստ որի Ներոնը ներկայանում է  
 իբրեւ չարութեան մարմնացում ու Դերա-  
 քրիստոս, չէր կարող այս կայսերը ժամա-  
 նակակից հայերից անցած լինել իրենց յետ-  
 նորդ սերունդներին:

Եթէ Ներոնի, իբրեւ Դերաքրիստոսի  
 պատկերացումը հայ յետնորդներին չէ ան-  
 ցել այս կայսերը ժամանակակից հայերից,  
 ապա այն պէտք է սրանց անցած լինի ուրիշ-  
 ներից: Այսպիսիք կարող էին լինենլ հայե-  
 րին հարեւան կամ հայերի հետ շփումն ու-  
 նեցող քրիստոնեայ ժողովուրդներ: Մինչեւ  
 Ե. դարը, երբ հայոց գրականութեան մէջ  
 արդէն արձանագրուած ենք դտնում Նեոն  
 բառը, հայերէն հարեւան ու նրանց հետ  
 շփումն ունեցող քրիստոնեայ ժողովուրդ-  
 ներ ներկայանում էին գլխաւորապէս հոռ-  
 մայեցիք, յոյներն, ասորիներն ու վրացիք:  
 Անկասկած է, որ հայերը Ներոնի, իբրեւ  
 Դերաքրիստոսի, գաղափարը կարող էին  
 փոխ առնել այս միջավայրից միայն:

Սակայն այստեղ մեր առաջ ծառանում  
 է մի տարօրինակ երեւոյթ, որը եւ կազ-  
 մում է Նեոն = Ներոն զուգադրութեան դէմ  
 խօսող երկրորդ կէտը:

Հայերը Ներոնի, իբրեւ Դերաքրիս-  
 տոսի, գաղափարը կարող էին փոխ առնել  
 կա՞մ հռոմայեցիներից ու յոյներից եւ կամ  
 ասորիներից ու վրացիներից: Բայց ինչո՞ւ  
 Ներոն անունը միայն հայոց մէջ է փոխա-  
 րինում Դերաքրիստոս անուանն, այն ինչ  
 այս բոլոր ժողովուրդների մէջ կայ միայն  
 Անտիքրիստոս կամ Անտիքրիստ բառը, որ  
 Դերաքրիստոս է նշանակում: Ամենահին  
 վաւերագրերի մէջ, այն է՝ Յովհաննու Ա.  
 փաւերագրերի մէջ, որ տեղ հայերէնն ունի  
 ու Բ. թղթերի մէջ, որ տեղ հայերէնն ունի  
 Նեոն ու Նեոինք, լատին, յոյն ասորի ու  
 վրացի բնագիրներն ունին Անտիքրիստոս:  
 Որքան մեզ յայտնի է, ոչ մի այլ ժողովրդի  
 համար չէ մատնանշուած, թէ նրա գրակա-  
 նութեան մէջ Անտիքրիստոս բառի փոխա-  
 րէն գործ է ածուել կամ գործ է ածուում  
 Նեոն բառն այս կամ այն փոփոխակով:  
 «Ուրիշ ազգք եւ լեզուք... մերին նման աս-  
 նուն չունին», — հաստատում է Ալիշանը<sup>1</sup>:

Յատուկ անունն անշուշտ կարող է  
 ստանալ հասարակ անունն իմաստ, սակայն  
 սրա համար հարկաւոր են յատուկ պայման-  
 ներ: Մեզ միանգամայն հասկանալի է, երբ

<sup>1</sup> Ալիշան «Հին հասարէք», 231:

մի Յուլիանոս Ուրացողի մասին վատ յուշիկներն այնքան վառ են մնացած լինում հայ ժողովրդի մէջ, որ սա ստահակ երեւիաներին անուանում է «Չար Յուլիանոս»<sup>1</sup>: Հասկանալի է, որովհետեւ դիտենք, թէ Յուլիանոսի ժամանակ հայերը քրիստոնեայ էին, մասամբ բիւզանդացւոց հպատակ ու մասամբ էլ՝ հարեւան: Նոյնպէս ըմբռնելի է, երբ անունը մի Լենկ-Քեմուրի, որի ձեռքից այնքան հուր ու սուր է տեսել հայ ժողովուրդը, մեր բարբառներում դառնում է հասարակ մահուան՝ «յամառ, չարագործ մարդ» նշանակելով<sup>2</sup>: Մի եւ նոյնը կարելի է ընդունել նաեւ Կայէն ու Յուզա նախատական մակերիւրների համար. այս անուններն ու սրանց հետ կապուած բացառական զաղափարները հայերին անցել են քրիստոնէական գրականութեան հետ միասին:

Իսկ Ներոնը:

Հայ ժողովուրդն անձամբ հալածանք չէ կրել նրանից: Նրա մասին վատ յուշիկներ ու զրոյցներ կարող էին անցել օտարներից միայն, միջնորդաբար: Այս պարագայում անըմբռնելի է, թէ ինչու Ներոնի յիշատակն այնքան վառ է մնացել Հայաստանում, որ նրա անունը հայ գրականութեան մէջ դարձել է Դերաքրիստոսին համազօր մի բառ, իսկ այն ժողովուրդների մէջ, որոնք իրենց կաշու վրայ են զգացել հալածող կայսեր հրաշէկ խարանի մրմուռները, կայ միայն Անտիքրիստոս բառը: Արդեօք զարմանալի չէ՞ր թուալ, եթէ, օրինակ ասենք, Արդիւլ-Համիդ բառն ատելի մականուն դառնար ոչ թէ հայոց, յունաց կամ ասորիների մէջ, որոնք Տաճկաստանում դառնակսկիծ օրեր են քաշել կամ տեսել այս սուլթանի օրով, այլ դենք թէ հարեւների կամ իուլանտացւոց մէջ:

Նեոն բառի ստուգաբանութեան ժամանակ կայսր = Կեսար զուգադրութիւնը մէջ բերելը մեր կարծիքով ոչ թէ հաստատում է Նեոն = Ներոն զուգադրութիւնն, այլ, ընդհակառակը, խարխլում: Խարխլում է, որովհետեւ Կեսար յատուկ անուան «կայսր»

բառ դառնալը միայն հայերէնում չէ կատարուել, այլ շատ ուրիշ լեզուներում էլ: Այսպէս նոյն անունից յունարէնն ունի *καίσαρ*, գոթերէնը՝ *kaisar*, գերմաներէնը *Kaiser*, արաբերէնը՝ *qaisar*, լատիներէնը՝ *caesar*, ռուսերէնը՝ *цезарь* ու *царь* եւայլն<sup>1</sup>: Այն ինչ Նեոն = Ներոն զուգադրութիւնը Միթարեան-Հիւրչմանական ստուգաբանութեան համաձայն կայ մեն-մենակ հայերէնում: Հայոց արտակարգ ու բացառիկ յիշաչարութիւնը մեզ անհաւանական է թւում:

Այսպիսով, երեք հանգամանք, այն է՝

1. Յունարէնից փոխ առած բառի վերջին վանկի օ ձայնաւորի անկման եզակի դէպքը հայերէնի մէջ պարթեական ու վաղ-քրիստոնէական շրջանում.
2. Հայ-հոռմէական յարաբերութիւնների բարեկամական բնոյթն ու հայերի հեթանոս լինելը Ներոնի ժամանակ եւ
3. Նեոն = Ներոն զուգադրութեան, բացառապէս հայերէնում միայն գոյութիւն ունենալը

կասկածի տակ են ձգում Նեոն = Ներոն բացատրութիւնը եւ հարկադրում փրնտուելու մի ուրիշ ստուգաբանութիւն, որ ոչ միայն հնարաւոր ու հաւանական լինի լեզուաբանական օրէնքների տեսակէտից, այլ եւ չհակասէ պատմական միւս տուեալներին էլ:

Ստորեւ մենք առաջադրում ենք մի նոր ստուգաբանութիւն, եւ թւում է թէ այս ենթադրութիւնը բաւարարում է յիշեալ երկու պահանջներն էլ:

(Շարունակելի:) ԹՄՐԻՆՍ ԱՌԿԱՆԻԳԵԱՆ

Նրեւան:



<sup>1</sup> Ամատունի, 540, Աճառեան «Հայերէն գաւառ-բառարան», 877. — «Չար Լիանոս, Չար Գլիանոս, Չար Յուլիանոս»:  
<sup>2</sup> «Հանդէս Ամսօրեայ», 1898 (Յովհ. Գաղանձեան «Նշագրիկից Հայոց գաւառաբարբառը. — Լէկատեմիւր (= Լենկ-Քեմուր) — յամառ, Գէգ, արագործ մարդ»: